ՎԱՆԱՁՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՁԵՏԵՂՎԵՑ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՃԳՆԱՐԱՆԻՑ ԲԵՐՎԱԾ ՆՎԻՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՔԸ

Հոկտեմբերի 14-ը, որը Հայոց Եկեղեցու օրացույցով մեր Սուրբ Թարգմանիչ վարդապետների տոնն է, Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ եկեղեցու համար նշանավորվեց պատմական և անկրկնելի մի իրադարձությամբ ևս. Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի ձեռամբ օծվեց Ս. Գրիգոր Նարեկացու ճգնարանից բերված քարի մասունքը և օրհնվեց նույն ճգնարանի ժայռափոր եկեղեցու խորհրդարանի պատից քերված հողը:

Նվիրական այս սրբությունները ձեռք են բերվել Սրբազան Հոր՝ օգոստոսի 15-25-ը դեպի Արևմտյան Հայաստան կայացած ուխտագնացության ժամանակ: Ճգնարանը գտնվում է Արևմտյան Հայաստանի Վանա լճի հարավային ափին՝ Ս. Գրիգոր Նարեկացու անունը կրող Նարեկ, այժմ Եմիշլիք գյուղից հյուսիս-արևմուտք շուրջ 2 կմ հեռավորության վրա:

Հարյուրավոր վանաձորցիներ էին եկել՝ մասնակցելու հանդիսավոր այդ արարողությանը, ականատեսն ու վկան դառնալու պատմական այդ իրադարձությանը, համբուրելու նվիրական մասունքը, որ այսուհետ կզետեղվի եկեղեցու խորհրդարանում:

Քարի բեկորն օծվեց և հողն օրհնվեց՝ ի մխիթարություն աղոթասեր հավատացյալների և ի զորացումն՝ Սրբի անունը կրող Առաջնորդանիստ այս սուրբ եկեղեցու: Ապա Սրբազան Հայրն իր օրհնության խոսքը բաշխեց բոլոր հավատացյալներին՝ ի մասնավորի ասելով. «Այսօր Սուրբ Թարգմանիչների տոնն է, ովքեր նախանձախնդրություն ունեցան հայ ժողովրդի ազգային պատկանելությունը հայ մարդու սրտում դաջելու: Տոնն է նաև Ս. Գրիգոր Նարեկացի վարդապետի, որի անունով է կոչվում առաջնորդանիստ մեր սուրբ եկեղեցին: Ուստի այսօր մեր եկեղեցու անվանակոչության, ուխտի ու մատաղի օրվա առթիվ ուրախ եմ հայտնելու, որ մշտապես մեր կողքին է եկեղեցու՝ տարվա խաչքավոր պրն Գուրգեն Խաչատրյանն իր ընտանիքով, ում կողմից բոլոր ներկաներին կբաշխվի մատաղ՝ ի մխիթարություն մեր ժողովրդի:

Սակայն այսօր այս սուրբ վայրում պիտի կատարվի չկրկնվող և պատմական մի իրադարձություն. կօծվի և կօրհնվի Ս. Գրիգոր Նարեկացու քարայր-ճգնարանից մեծագույն դժվարությամբ ձեռք բերված քարի մասունքը և խորհրդարանի հողը: Քարի մասունքը, որ լվացվել ու հողմահարվել է ճգնարան քարայրի մեջ, մեր ժողովրդի վերքերի, վշտերի ու աղոթք դարձած հույսերի խտացումն ու կարծրացումն է, ինչպես Նարեկի ի խորոց սրտի խոսքը Աստծուն ուղղված: Այս ժայռաբեկորի մեջ Նարեկացու աղոթքներն ու մրմունջներն եմ լսում, նրա լացով ու ողբով է լցվել այս քարը: Հետագայում եկեղեցու մի անկյունում կկառուցվի փոքրիկ մատուռ՝ Ս. Սեղանով, որի վրա կդրվի մասունքը»:

Օծման արարողությունից հետո հավատացյալները՝ առ ի երկրպագություն՝ հավատքով, երկյուղով, և հույսով՝ ի բժշկության, մերձեցան սրբագործված մասունքին՝ հույսով ու հավատքով, որ Բարձրյալն Աստված ընդունելի կանի և ի կատար կածի բոլորի խնդրանքները: